

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ԶԵՌԱԳՐԱԳԷՏ ՀԱՅՐԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԾ ԶԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Միսիթարեան միաբանութիւնը հայ ժողովրդի պատմութեան մէջ հայրենիքից դուրս գործող թերեւս ամենաբեղուն, տեւական ու նշանակալից հոգեւոր, գիտական եւ մշակութային օջախն է:

Միսիթար Սեբաստացին 1717ին հաստատուելով Ս. Ղազարում՝ հետեւողականօրէն սկսեց եւ ուղենչեց մի վիթխարի գրական, պատմաշակութային գործունէութեան սկիզբ ու ծրագիր, որով ընթացան եւ զարգացրին Միսիթարեան յաջորդ սերունդները՝ ստեղծելով այնպիսի գործեր, որոնցից շատերը մինչ օրս անգերազանցուած եւ եզակի են իրենց ասպարէզում: Այս է պատճառը, որ այսօր էլ նրանց գործունէութիւնը ուսումնասիրութիւնների, հետազոտութիւնների առարկայ է եւ նոր քննութիւնների աղբիւր:

Հետաքրքիր է, որ Միսիթարեանների բազմավաստակ եւ բազմակողմանի գործունէութիւնը ներկայացնող եւ արժեւորող ուսումնասիրութիւններում ու յօդուածերում մինչ այժմ ըստ հարկի չի ներկայացուել եւ չի գնահատուել ձեռագրագիտութեան եւ ձեռագրացուցակների կազմութեան աշխատանքներում նրանց ունեցած դերն ու աւանդը, առանձին ուշադրութեան չի արժանացել նրանց գործունէութեան այս ասպարէզը: պէտք է միայն առանձնացնել Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի գլխաւոր աւանդապահ, ձեռագրագէտ Գէորգ Տէր-Վարդանեանի արժէքաւոր գրախօսականը Վենետիկի Միսիթարեան միաբանութեան ձեռագրացուցակներից Դ. եւ Է. հասորների վերաբերեալ¹: Այնինչ, ձեռագրացակներից Դ. եւ Է. հասորների վերաբերեալ հետ աշխատելու սկիզբը, հիմքն ու կարեւորագոյն ուղենիշներն են, կարեւոր աղբիւրագիտական

¹ Տէր-Վարդանեան, Գ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Միսիթարեանց ի վենետիկ, հասոր Դ. եւ հասոր Է., ի Պատմարագիտական համելէս, 1995, թիւ 2, 245-253:

նշանակութիւն ունեն պատմութեան, գրականութեան, արուեստի պատմութեան, ծիսագիտութեան եւ բազում այլ գիտակարգերի համար ցայսօր:

Մի բան է հաւաքել, փրկել, պահպանել հայ մշակոյթի կարեւորագոյն գանձերը՝ ձեռագրերը եւ ստեղծել իր հարստութեամբ եւ ճոխութեամբ աշխարհում հայերէն ձեռագրերի երրորդ հաւաքածոն, մի բան է այն ներկայացնել գիտական հանրութեան որոշակի մշակուած սկզբունքներով, պարզաբանուածներով եւ գիւտերով ու բացայացուածներով:

Միսիթարեանները ոչ միայն մանրամասն հոգատարութեամբ հաւաքել եւ սրբօրէն պահել են հայերէն ձեռագրերը, այլեւ դրանք ներկայացրել գիտական հանրութեան՝ ոչ միայն իրենց մասնաւոր ուսումնասիրութիւններով, այլեւ համակարգուած, մշակուած որոշակի սկզբունքներով ձեռագրացուցակներ կազմելով:

Ձեռագրերի գիտական նկարագրութիւնը եւ ձեռագրացուցակի տեսքով հրատարակութիւնը նպատակ ունի որոշակի սկզբունքներով ներկայացնելու տուեալ հաւաքածուի ձեռագրերը։ Հստ էութեան, նկարագրութիւնները ձեռագրերի գիտական անձնագրերն են, որոնցում տուեալների լիարժէքութիւնը պայմանաւորուած է ցուցակի կազմութեան եղանակով եւ առանձնայատկութիւններով, ինչպէս նաև այն կազմողի գիտական բարձր մակարդակով, գիտելիքներով, բարեխղճութեամբ։ Մեր նպատակն է ուրուագծել Միսիթարեանների կողմից կատարուած այս հսկայածաւալ եւ մանրամասն աշխատանքի ընդհանուր պատկերը, ներկայացնել վենետիկի ձեռագրագէտ հայրերի՝ Հ. Բարսեղ վրդ. Սարգիսինի, Հ. Գրիգոր վրդ. Սարգսեանի, Հ. Արսէն վրդ. Ղաղիկեանի, Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանի պատրաստած ձեռագրացուցակները (պատմութիւնը, կազմութեան սկզբունքները, կապը իրենցից առաջ եղած, իրենց ժամանակակից եւ իրենցից յիտոյ կազմուած ձեռագրացուցակների հետ)։

Վենետիկի Միսիթարեան միաբանութեան ձեռագրական հաւաքածոն, որ իր ճոխութեամբ եւ հարստութեամբ երրորդն է, ներկայացուած է տպագիր ութհատորեակով՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վենետիկ» խորագրով։

Այս մեծ աշխատանքը յաջորդաբար կատարել են միաբաններ Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեանը (Ա.-Բ. Հատորներ), Հ. Գրիգոր վրդ. Սարգսեանը (Գ. Հատոր), Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանը (Դ.-Լ. Հատորներ): Սակայն պէտք է յիշել նաև հաւաքածուիս ձե-

ռազրերի նկարագրութիւնը պարունակող անտիպ ցուցակը եւ նրա հեղինակին, որի մասին յիշում են Հ. Սարդիսեանը Ա. հատորի, Հ. Ճեմճեմեանը Դ. Հատորի առաջաբաններում, ապա աւելի մանրամասն բացատրութիւնը կարդում Գ. Տէր-Վարդանեանի վերը յիշուած գրախօսականում, ով այն միտքն է յայտնում, թէ այդ ցուցակի առաջաբանը կարելի է տպագրել անհրաժեշտ ծանօթագրութիւններով։ Այս ցանկութիւն-առաջարկը անպատասխան չի մնում եւ Հ. Ճեմճեմեանի կազմած ի. Հատորի առաջաբանում այն տպագրուած ենք տեսնում փոքրիկ բացատրականով։²

Այսպէս, մինչ տպագիր ձեռագրացուցակների կազմութիւնը մատենադարանը ունեցել եւ այժմ էլ ունի «Աւգերեան ցուցակ»՝ կոչող մի ձեռագրացուցակ, ինչպէս արդէն անոնից է պարզ՝ կազմուած նշանաւոր միաբան, աստուածաբան, բանասէր Հ. Մկրտիչ վրդ. Աւգերեանի ջանքերով։ 1791ին, 29ամեայ գրապետ Հ. Մկրտիչ սկսում է արդ աշխատանքը Հ. Միքայէլ վրդ. Զամշեանի քաջալերանքով՝ հաւատացած լինելով, որ «անցանկ մատենադարանը՝ բանալի չունեցող մշտափակ գուռ մըն է կամ անխնամ գանձատուն մը՝ որ հաշուեգիր չունի»³։

Նա ցուցակագրել է մատենադարանում այն ժամանակ եղած բոլոր 650 ձեռագիրը՝ աշխատելով երկու տարի եւ օգնական ունենալով իր վեց դասընկեր քահանաները, վանքի ընծայարանի ութ աւագ եւ տասներկու կրտսեր աշակերտի⁴: Ցուցակը մեծադիր մի ձեռագիր է, կազմուած խիստ առարկայական-այբբենական կարգով, յետագայում լրացումներ կատարելու համար բաց թողնուած տեղերով եւ կատարուած լրացումներով, նաեւ ընդարձակ առաջաբանով։ Այն կազմուած է մատենաների պարունակած նիւթերի այբբենական կարգով։ Ինչպէս Գ. Տէր-Վարդանեանն է գրում. «Թէեւ Աւգերեան ցուցակը պատրաստուած է որպէս ներքին գործածութեան գոյքացուցակ, բայց սա հայերէն առաջին

2 ՃԵՄՃԵՄԵԱՆ, Հ. Վրդ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Սիմեոն ի Վենետիկի, հու. Է., Վենետիկի 1996, գ.-ժդ.: Յնդամին Սիմեոն ի Վենետիկի Միաբանութեան հայերէն հայերէն տագայ շարադրաներում Վենետիկի Միաբանութեան միաբանութեան հայերէն ձեռագրերի այս ցուցակները յիշատակելու ենք Ա., Բ., Գ., Դ., Ե., Զ., Է. համառօտումով։

3 Անդ, էջ դ.:

4 Տէր-ՎարդԱՆԵԱՆ, Գ., Յշ. աշխ., 250: Հմմտ. ՍՍ.ՐԳԻՍԵԱՆ, Հ. Բ. Վրդ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Սիմեոն ի Վենետիկի, հու. Ա., Վենետիկի 1914, ժր., Ժը., եւ հու. Գ., Խզ.-իւ.։

գիտական ձեռագրացուցակն է⁵: Համեմատութեան համար նշենք, որ Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի հաւաքածուի հիմք կազմող էջմիածնի գրատան ձեռագրերը առաջին անգամ ցուցակագրուել են միայն 1828 թուականին Մանուչի Գիւմուշ-խանեցու կողմից⁶:

«Աւգերեան ցուցակը» բնականաբար նկատի է առնուել ութհատորեակի կազմութեան ժամանակ: Վենետիկի ձեռագրացուցակների իւրայատկութիւններից ամենակարեւորը՝ ըստ նիւթի հատորների կազմութիւնը եւ ոչ թէ ըստ ձեռագրերի համարների յաջորդական կարգի, դալիս է հէնց այս ցուցակից⁷: Այս տեսակաւորման սկզբունքը ընդունել է նախ առաջին հատորը կազմող Հ. Սարգիսեանը, ով սկզբունքի յարմարութիւնը բացատրում է նրանով, որ այն հնարաւորութիւն է տալիս որոշելու, թէ այս կամ այն բովանդակութեան քանի ձեռագիր կայ տուեալ ցուցակում, կամ որն է աւելի հինը, որը նոր եւ այլն»⁸: Սկզբունքը շարունակում է նաև Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանը:

Ըստ այսմ՝ Վենետիկի հայերէն տպագիր ձեռագրացուցակները ներկայացնում են նկարագրութիւնների հետեւեալ բովանդակային պատկերը.

Ա. Հատոր

24 Ասոուածաշունչ, 61 Սալմոսարան,

106 Աւետարան, 8 նոր Կտակարան

Բ. Հատոր

40 Ճառընտիր, 54 Ռսկեփորիկ,

23 Հաւաքումն բանից, 2 Ժողովածու

Գ. Հատոր

120 Մաշտոց, 17 Գիրք ձեռնադրութեան

Դ. Հատոր

139 Շարակնոց, 33 Ճաշոց, 45 Ժամագիրք,

31 Խորհրդատետր, 18 Մանրուամունք, 3 Կցուրդք

5 Տէր-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Գ., Աշ. աշխ., 251:

6 ԵԳԱՆԵԱՆ, Օ. - ԶԵՅԹՈՒՆԵԱՆ, Ա. - ԱՆԹԱԲԵԱՆ, Փ., Ցուցակ ձեռագրացուցակի անուան Մատենադարանի, հա. Ա., Երեւան 1965, 27:

7 Տէր-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Գ., Աշ. աշխ., 250:

8 Տե՛ս հա. Ա., Էջ ժող.:

Ե. Հասոր

34 Յայսմաւուրք, 26 Գանձարան, 42 Տաղարան, 44 Տօնացոյց

Զ. Հասոր

121 Պատմագիրք, 36 Կանոնգիրք, 14 Աղօթագիրք,

34 Գրիգոր Նարեկացու, 71 Ներսէս Շնորհապու,

58 Ներսէս Լամբրոնացու մատենագրութիւնն

Է. Հասոր

12 Տօնապատճառ, 69 Ժողովածու, 360 Մատենագիրք հայոց

Ը. Հասոր

211 Թարգմանութիւնն, 14 Վարք հարանց, 83 Բժշկարան

Այս առեիթով արդէն յիշուած գրախօսութեան մէջ Գ. Տէր-Վարդանեանը մատնանշում է այն էական թէրութիւնը, որ բխում է նմանատիպ ձեւով կատարուած ցուցակագրութեան ժամանակ. այն է՝ երկու տարբեր նիւթեր ունեցող մատեանների բայցթողումը կամ կիսով չափ նկարագրութիւնը եւ ցուցակների տպագրութիւնից յետոյ Միխթարեանների հաւաքածուն համալրած տարբեր բնոյթի մատեանների նկարագրութեան եւ տպագրութեան հարցը:

Վենետիկի ցուցակի Ա. Հասորը տպագրուել է 1914ին: Հասորը մեծադիր է, երկսիւն, ոչ թէ էջակարուած, այլ սիւներից իւրաքանչիւրը համարակալուած՝ ընդամէնը 838 սիւն:

Ունի առաջաբան, որտեղ Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեանը ներկայացնում է ձեռագրացուցակի կազմութեան անհրաժեշտութիւնը, սկզբունքները, նկարագրութեան եղանակը, ընթերցողի գործածման ճիշտ ձեւը: Նշում է, որ առաջաբանում ճիշտ կը լինէր նախ տալ Վենետիկի ձեռագրական հաւաքածուի ստեղծման պատմութիւնը, սակայն դա առաջմ վաղաժամ է ու թուարկում է այն դժուարութիւնները եւ հանդամանքները, որոնք խանդարում են իրականացնելու այդ գաղափարը: «Ուստի աւելի բանաւոր եւ ըմբռն համարեցայ ընդհանուր Ձեռագրաց պատկանող պատմական այդ դերը վերապահել Մայր ցուցակիս վերջին հասորին» (Ա. Հոռ., էջ Ժբ.):

Առաջաբանում նշում է այն էական ընդհանուր կէտերը եւ սկզբունքները, որոնք կիրառել է ձեռագրերի նկարագրութեան ժամանակ: Դրանք հետեւեալներն են.

Ա. Ձեռագրերի բնութագրումը ճշտորէն եւ մանրամասն ներկայացնել «քոլոր իրենց ներքին եւ արտաքին, լաւ կամ յոնի հանգամանքներով. որպէս զի այն ամենայն, զորոնք ես ձեռք բերած

եմ բազմիցս թերթելով, կարդալով և երկայն խուզարկութեամբ, նոյները աչքի առջեւ ունենան նաև հեռաւորք՝ առանց իսկ կարդալու» (Ա. Հար., էջ մէջ.), եւ դրա համար նա մանրամասնօրէն բերում է «անոնց կրած մեծ կամ փոքր աւերածները, պակասը և նոր լրացումները»: Թէեւ ձեռագրի վիճակի մասին նշումը տարբեր ձեռագրացուցակներում տարբեր կերպ է՝ համառօտարից մինչեւ բաւական ընդարձակ, բայց քննութիւնը ցոյց է տալիս, որ ձեռագրի վիճակի ներկայացումը իրօք կարեւոր է: Եւ ներկայումս Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի «Մայր ցուցակի եւ ձեռագրագիտութեան» բաժնում ձեռագրերի նկարագրութիւնների եւ ձեռագրացուցակի կազմութեան աշխատանքի իրականացման ընթացքում եւս յատուկ ուշադրութիւն է դարձւում ձեռագրի ներկայ վիճակին, այն ներկայացւում է առանձին հարցակարգով, բաւական մանրամասն, յատուկ մշակուած ձեւով: Փաստորէն, այդ կարեւութիւնը նկատել է նաև Հ. Սարգիսեանը:

2. Բովանդակութիւն նկարագրելիս չի բաւարարուում միայն էջերը եւ վերնագրերը տալով, այլ ըստ հարկի նաեւ վերջաւորութիւնը. ինչպէս ինքն է գրում Յառաջաբանում. «բաւականացած չենք – ինչպէս ուրիշներն – երեսները կամ սիները միայն ցոյց տալով անցնիլ, եւ ոչ ալ՝ այլոց պէս նիւթին սկզբանաւորութիւնը միայն արտագրել չակերտի մէջ, այլ նոյն իսկ վերջաւորութիւնը» (Ա. Հար., էջ մէջ.): Այս սկզբունքը, ճիշտ է, միանշանակ կերպով չի կիրառուում, օրինակ Աստուածաշունչ մատեանների դէպքում, քանի որ դրանք բոլորը որպէս կանոն նոյն կերպ են վերջանում, բայց ալ դէն սկզբունքի կարեւորութեան գիտակցումը մեծ փաստ է, եւ ժամանակն էլ ցոյց տուեց, որ վերջնատողերի բերումը ձեռագրերի նկարագրութեան համար եւս անհրաժեշտ է ու էական. այսօր էլ երեւանի Մատենադարանի ձեռագրերի գիտական ընդարձակ նկարագրութեան ժամանակ շատ քիչ բացառութիւններով արւում են բովանդակութեան ոչ միայն սկզբնատողերը, այլեւ վերջնատողերը:

3. Համեմատութիւնը տպագրերի հետ, ընդ որում էական տարբերութիւնների դէպքում դրանց վրայ ընթերցողի ուշադրութիւն հրաւիրելլ նօտրագրմամբ, ըստ հարկի նաեւ ծանօթագրումը մամբ (Ա. Հար., էջ մէջ.-մզ):

4. Մատեաններում հանդիպող, հայերէնի տարբեր փուլերի եւ բարեանների հնչիւնական համակարգի եւ ուղղագրութեան տարբերութիւնները նոյնութեամբ արտագրել է՝ նկատի ունենալով այդ ինդրով զբաղուող մասնագէտների համար դրանց կարե-

ւորութիւնը, բայց եւ միաժամանակ տպագրական վրիպակ չկարծուելու համար նօտրագրով կամ շեղագրով առանձնացրել իսկ բոլորովին սղուած տառը կամ վանկը լրացրել է փակագծերում։ Այս սկզբունքները եւս գիտականօրէն ընդունելի են եւ շարունակում են կիրառուել մինչ օրս։

4. Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեանը իր ցուցակը կազմել է մեծապէս հաշուի առնելով այն գործնական հարցերը, որոնցով դիմում էին իրեն մասնագէտները՝ կապուած ձեռագիր մատեաններին վերաբերող ամենատարբեր հարցերի հետ։ Սա նրան հնարաւորութիւն է տալիս խորհելու եւ գտնելու այնպիսի եղանակները, որոնք կը պատասխանեն տարբեր մասնագէտների հետաքրքրող հարցերի, որոնք ժամանակ եւ միջոցներ չեն ունենալու վենետիկ համար եւ անձամբ ուսումնասիրելու ձեռագրերը։

5. Յատուկ ուշադրութեան է արժանացրել

ա. 61 ձեռագիր Սաղմոսների խմբակցութեան, իրար հետունեցած աղերսների, աղբիւրների, հեղինակների հարցը։

բ. ձեռագրերի հնագրութեանը. մասնաւորպէս երկաթագրերի տեսակների ճիշտ ներկայացումը, թուագրումը, յապաւումները եւ համառօտագրութիւնները, ընդ որում նա սկզբնապէս նպատակ է ունեցել նաեւ տպագրական եղանակով դրանք արտայայտելու, եւ մեծ ափսոսանք է յայտնում այդ նշանները ձուլուած շինելու պատճառով դրանց տպագրութեան անհնարինութեան համար։ Բայց ամէն դէպքում փորձել է կարեւորները ծանօթագրութեամբ տալ։

գ. յիշատակարաններում կրծատուած են գլխաւորապէս չորս Աւետարանների եւ աւետարանիչների մասին եղած այլաբանական խորհրդածութիւնները, աւելորդ կրկնութիւններից խուսափելու համար։ Նոյն գրչի գրած մէկից աւելի նոյն բովանդակութեան եւ գրեթէ նոյն ոճով գրուածներից արտագրուած են միայն ընդարձակները եւ շատ տեղեկութիւններ հաղորդողները, միւսների համար միայն էջերն են նշուած։

Անթուական կամ եղծուած թուականով յիշատակարանների դէպքում հնարաւորինս փորձել է պարզել դրանք եւ փաստերով լուսաբաննել։

Նկարագրութեան ժամանակ բացառապէս ընդունել է Հ. Յակոբոս վրդ. Տաշեանի կազմած Վիեննայի մատենադարանի հայերէն ձեռագրերի ձեռագրացուցակի սկզբունքները՝ կազմուած 30 կէտից՝ նոյն յաջորդականութեամբ պահելով դրանք։ Այսպէս, իւ-

բաքանչիւր ձեռագրի նկարագրութեան համար տրւում են հետեւ և ալ հարցերը եւ դրանց դիմաց՝ պատասխանները:

ԹԻՒ (N)
 ԽՈՐԱԳԻՐ
 ՀԻՆ ԹԻՒ (N)
 ԺԱՄԱՆԱԿ
 ԹՈՒՂԹ
 ՄԵՇՈՒԹԻՒՆ
 ԳՐՈՒԹԻՒՆ
 ՏՈՂՔ
 ԹԵՐԹ-Ք
 ՆԻՒԹ
 ԿԱԶՄ
 ՄԱԴԱՐԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ
 ՀԱՆԳԱՄԱՆՔ
 ԳԻՐ
 ԶԱՐԴԱԳԻՐՔ
 ԽՈՐԱԳԻՐՔ
 ԽՈՐԱՆՔ
 ԿԻՍԱԽՈՐԱՆՔ
 ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԱՐԴՔ
 ՆԿԱՐՔ
 ԴԱՏԱՐԿ
 ԺԱՄԱՆԱԿ
 ԳՐԻՉ
 ԾԱՂԿՈՂ
 ԿԱԶՄՈՂ
 ՏԵԱՐՔ ԿԱՄ
 ԱՏԱՑՈՂՔ
 ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ
 ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ապա թովանդակութիւնն է տրւում էջահամար-վերնագիր-սկզբնատող-վերջնատող (ըստ հարկի) կարգով եւ «յիշատակագրութիւններ» բաժինը:

Գիտական պահանջները մեծապէս բաւարարող եւ սպառիչ պատասխաններ տուող այս ձեռագրացուցակը ունի նաեւ թերու-

թիւններ կամ լուծումներ, որոնք կարող էին կիրառողի համար աւելի օգտակար լինել այլ ձեւով ներկայացուելու դէպքում:

Դրանցից մէկը արդէն վերը նշուած ձեռագրերի՝ ըստ տեսակների դասաղասուած նկարագրութիւնն է. սրա առաջացրած անյարմարութիւններից մէկի մասին արդէն նշեցինք: Միւսն այն է, որ այս դէպքում ցուցակում իւրաքանչիւր ձեռագրին՝ երկու համար է նշուած, որոնցից մէկը տուեալ ցուցակում ձեռագրի նկարագրութեան հերթական համարն է, միւսը, որ երբեմն նըշուած է հին թիւ կամ ուղղակի թիւ ձեւով՝ ձեռագրի բուն համարը (գոյքահամարը): Այս երկու համարների ստեղծումը երբեմն կարող է շփոթ առաջացնել, այդ պատճառով էլ յաճախ գրականութեան մէջ տրուամ են երկու համարներն էլ համարիչ-յայտարարի ձեւով: Այնինչ ձեռագրերի յաջորդական նկարագրութեան դէպքում այդ երկուսը կը նոյնանային եւ գրականութեան մէջ թուերի խճողում չէր առաջանայ:

Ձեռագրացուցակի ամենահական պակասը ցանկերի բացակայութիւնն է. բազմաբնոյթ ցանկերը ձեռագրացուցակների հարուստ ու բազմատեսակ տեղեկութիւնները լաւագոյնս ներկայացնող եւ հետազոտողին անընդհաս օգնող խիստ անհրաժեշտ միջոցներ են: Հ. Բարսեղ Վրդ. Սարգիսեանի կազմած Ա. եւ Բ. հատորները չունեն ցանկեր. պատճառն է այն է, որ նա որոշել էր բոլոր ցուցակները կազմելուց յետոյ ընդհանրական ցանկեր կազմել, ինչպէս որ ձեռագրական հաւաքածուի պատճութեան ստեղծումն էր թողել ձեռագրացուցակների կազմումից յետոյ: Ցաւօք, նա չկարողացաւ աւարտին հասցնել այդ նպատակը. կիսատ թողեց նաեւ Գ. հատորը, որ լրացրեց եւ տպագրութեան հասցրեց յաջորդ երախտաւոր հայրը՝ Հ. Գրիգոր Վրդ. Սարգսեանը:

Թերութիւններից մէկն էլ յետագայի յիշատակարանների եւ յիշատակագրութիւնների մօտ համապատասխան թուականի, իսկ անթուակլինների դէպքում մօտաւոր թուագրման բացակայութիւնն է, որի պատճառով այս կամ այն ժամանակաշրջանի յիշատակարաններով հետաքրքրուողը պէտք է կարդայ բոլոր յիշատակարանները՝ անհրաժեշտը գտնելու:

Բ. հատորը, որ լոյս է տեսնում նախորդից 10 տարի անց՝ 1924ին, պարունակում է Ճառընտիրների, Ոսկեփորիկների նկարագրութիւններ եւ կազմութեան մկրունքներով չի տարբերում Ա.ից, միայն չունի Առաջաբան եւ ինչպէս նախորդը ցանկեր:

Գ. հատորը (Մաշտոցներ եւ Ձեռնադրութեան գրքեր) տըպագրուել է միայն 1966ին, նրանում պարունակուող 137 ձեռագ-

ըերի նկարագրութիւնից 35ը կատարել է Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեանը, իսկ նրա մահից յետոյ գործը շարունակել է. Գրիգոր վրդ. Սարգսեանը: Սակայն ձեռագրացուցակը տպագրուել է նաեւ Հ. Գ. վրդ. Սարգսեանի մահից յետոյ, այդ պատճառով վերջնական սրբագրման եւ հրատարակման գործը հսկել է հայր Սահակ վրդ. Ճեմճեմեանը՝ Հ. Կոմիտաս վրդ. Ունճեանի օգնութեամբ: Ճեմճեմեանը Գ. Հատորի համար կազմել է նաեւ ցանկեր, ճիշտ է, դեռևս ոչ շատ հարուստ՝ միայն անձնանունների, տեղանունների եւ հատորի ձեռագրերի ընդհանուր ցանկ: Այս հատորում նաեւ տըպագրուում են Մատենադարան նոր մուտք գործած Յ Մաշտոցների եւ Հ. Բ. վրդ. Սարգիսեանի ուշագրութիւնից վրիպած եւս 2 Մաշտոցի նկարագրութիւն, իսկ յաւելուած»ում ներկայացւում այլ ձեռագրերի կազմում եղած Մաշտոցի մասերը:

Դ.ից մինչեւ վերջին՝ Հ. Հատորի կազմութիւնը շարունակեց նշանաւոր բանասէր, վանքի Աբբասյայր Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանը:

Դ. Հատորը տպագրուեց 1993ին, բայց ինչպէս առաջաբար նում է գրում Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանը, շուրջ 25 տարի պատրաստ էր ու սպասում էր հրատարակութեան: Մրանով ամբողջանում է հայ եկեղեցու՝ Վենետիկում մատենադարանում ծիսական մատեանների նկարագրութիւնը: Թէեւ արդէն կար երեւանի Մատենադարանի ձեռագրացուցակի կազմութեան նոր՝ աւելի կատարելագործուած սկզբունքները, սակայն Հ. Ճեմճեմեանն էլ նշում է, որ հետեւել է իր նախորդների որդեգրած, այն է՝ Տաշեանական սկզբունքին, քանի որ ձեռագրերի նկարագրութեան ժամանակ Մաշտոցեան Մատենադարանի նկարագրութեան սկզբունքները դեռ չկային, իսկ տպագրութիւնից առաջ եղածը մասնակի փոխելլ աւելի կ'ուշացնէր առանց այդ էլ բաւական յետաձգուած գործը: Ինչպէս արդէն նշել ենք, այս եւ յաջորդ է. Հատորի վերաբերեալ ուշագրաւ եւ մանրամասն գրախօսական է գրել Գէորգ Տէր-Վարդանեանը:

Այս Հատորի առաջաբանը յատկապէս արժէքաւոր է նրան նով, որ այստեղ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեանը, միահիւսելով գիւտանի փաստաթղթերը, նամակները, ձեռագրերի նշումները, ներկայացնում է Միլիթարեանների հաւաքածուի գոյացման պատմութիւնը, «որի կարիքը հայագիտութիւնը վաղուց եր զգում»⁹:

9 Տէր-Վարդանեան, Գ., Ցշ. աշխ., 251:

Պատմութիւնը շարունակւում է նաեւ յաջորդ կ. եւ Զ. հատորների Առաջաբանում՝ հասնելով մինչեւ 1800ի առաջին կեսը:

Է. հատորը տպագրւում է 1996ին, յետմահու, սակայն իր հիւանդութեան ժամանակ նա տուել էր անհրաժեշտ ցուցումներն ու հրահանգները հրատարակիչներին: Այս մասին Առաջաբանում դրում է Հ. Սերոբ Զամուրլեանը: Է. հատորի սկզբում է տպագրւում նաեւ Հ. Մկրտիչ Վրդ: Աւգերեանի արդէն նշուած «անտիպ ցուցակի» առաջաբանը: Ը. հատորը, որ տպագրւում է յետմահու 1998ին, եւս ամբողջովին պատրաստուած էր, բայց սրբագրութիւնը, ցանկերի կազմումը եւ տպագրութիւնը կատարում է Հ. Վահան Օհանեանը: Ը. հատորի վերջում կարեւոր են ցանկերը, որոնք աւելի մանրամասն են, աւելացուած հրատարակուած բոլոր ձեռագրերի ցանկը, նաեւ Զ. հատորի տեղանուննիւնը ցանկը, քանի որ Զ. հատորում վրիպմամբ է. հատորի ցանկն էր տպագրուել:

Բացի այս ձեռագրացուցակներից՝ Միկիթարեան միաբաններից նշանաւոր բանասէր Հ. Արսէն Վրդ: Ղաղկեանն է կազմել ձեռագրացուցակ, որ բաւականին փոքրածաւալ է, համառօտ նկարագրութիւններով, բայց արժէքաւոր նրանով, որ ներկայացնում է Կ. Պոլսի Ղալաթիայի Ս. Լուսաւորիչ եկեղեցու ձեռագրերը, որպէս միակ գիտական վկայութիւն եւ աղբիւր այդ ձեռագրերի, որոնք այսօր կորսուած են: Հ. Արսէն Վրդ: Ղաղկեանը Ղալաթիայի Ս. Լուսաւորիչ եկեղեցու ձեռագրերի համառօտ այս ցուցակը կազմել է 1920 թուականին: Ցուցակը եղել է անտիպ, բախտի մի դիպուածով Յարութիւն Քիւրտեանը գտել է այն Պոլսում գնած զանազան ձեռագրեր տեսրերի եւ գրքերի մեջ, չից, ապա հրատարակել նկարագրութիւնից 48 տարի անց 1968ին նախ «Բազմավիպ» ում, եւ մէկ տարի անց, առանձին գրքով, Վենետիկում: Այդ տետրակը Յ. Քիւրտեանը նկարագրում է իբրեւ «քաց վարդագրյն հասարակ թղթեայ կազմով, 15,5/19,5 հետքմ. մեծութեամբ, կապուտագիծ քառակուսիներով՝ ներմակ թուղթ, 41 թերթերէ կը բաղկանայ, որուն 24ր.էն անդին բոլորովին պարապ»¹⁰:

Ցուցակը պարունակում է 37 ձեռագրի նկարագրութիւն, թէեւ վերջին ձեռագրին ունի 61 թուահամարը, չգիտենք՝ ով կամ երբ է համարակալել այդ ձեռագրերը, բայց դրանից ակնյայտ

¹⁰ ՂԱԶԻԿԵԱՆ, Հ. Ա. Վրդ, Համառօտ ցուցակ ձեռագրաց Ղալաթիայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու, Քիւրտեան, Յ. (հրտ.), Վենետիկ 1969, 1:

է, որ երբեւէ այդ խմբում եղել է առնուազն 61 ձեռագիր: Ցուցակում ձեռագրերը ըստ իրենց համարների են, բացակայ ձեռագրերի փաստը արձանագրուած է: Այսպէս, սկզբում չկան 1-3 ձեռագրերի նկարագրութիւնները, այս մասին նշելով, Հ. Ղազիկեանը սկսում է համար 4 Աւետարանից: Նկարագրութիւնները իիստ համառօտ են՝ ընդհանուր տեսք, ձեւ, չափ, վիճակ, գրութեան տեսակ, մանրանկարներ, գարդագրեր, ժամանակ, եթէ ունի թուական, եւ հիմնական յիշատակարանը համառօտելով: Ըստ երեւոյթին Հ. Ղազիկեանը այն կազմել է եղած ձեռագրերի մասին նախնական տեղեկութիւններ տալու համար, մի հանդամանք, որ պէտք է անէին Ս. Լուսաւորիչ եկեղեցու հոգեւորականները կամ այն մարդիկ, ում պատասխանատուութեան ներքոյ գտնուում էին ձեռագրերը եւ ովքեր, ըստ ամենայնի, նրանց հետ ոչ միայն աշխատելու, այեւ ինքնուրոյնաբար դասաւորելու եւ ցանկելու գիտելիք չունէին: Մեր այս ենթագրութեան ապացոյցներից կարելի է համարել ձեռագրերի անխնամ եւ անբաւարար վիճակը, որի մասին Ցուցակի վերջում ահազանգում, զգուշացնում է Հ. Արսէն վրդ. Ղազիկեանը. «...ինծի պարտ կը համարեմ պատուարժան խնամակալութեան ուշադրութիւնը հրաւիրել անոնց աւատելի վիճակին վրայ: Անոնք օդ, արեւ, լոյս, չորութիւն կ'աղաղակե՞ն պէտք է տալ իրենց, պէտք է հանել զանոնք խոնաւ, մգլու իրենց որդէն ու տուփերէն»¹¹: 1940ականների առաջին կէսին Յ. Քիւրտեանը գրեթէ նոյն վիճակում է տեսել այս ձեռագրերը, բայց արդէն ընդամէնը 15ը, փակուած թիթեղեայ տուփերի մէջ, ինչի վերաբերեալ արտայայտել է իր անհանգստութիւնը¹²: Ամէն դէպքում, չորհիւ Հ. Արսէն վրդ. Ղազիկեանի կազմած այս խիստ համառօտ ձեռագրացուցակի, մենք ունենք հայերէն ձեռագրերի մի փոքրիկ խմբի երբեւէ գոյութիւն ունեցած լինելու մասին վկայութիւն, նաեւ անհրաժեշտ որոշ գիտական տեղեկութիւններ:

Վենետիկի Միիթարեան միաբանութեան հարուստ ձեռագրական հաւաքածուի ստեղծման պատմութիւնը հիւսելիս Հ. Ս. վրդ. Ճեմճեմեանը ձեռագրերի հաւաքման գործում իրենց ներդրումն ունեցող հայրերի ու անձանց մասին գրել է. «Քաղցը է ինձի հոս հրապարակաւ դրոշմել անոնց անունները, որոնք գործած են լուս եւ անաղմուկ»¹³: Այսօր, այս անուններին իրաւամբ պէտք

11 Անդ, 15:

12 Անդ, 1:

13 Հո. Դ., էջ թ.:

է աւելացնենք Ս. Ղազարի ձեռագրագէտ հայրերին, որոնց կազմած նկարագրութիւնների ու ձեռագրացուցակների չնորհիւ այսօր բոլորին հասանելի է Մխիթարեան միաբանութեան ձեռագրական գանձի մանրամասն տուեալները, ինչպէս նաեւ տեղեկութիւններ այնպիսի ձեռագրերի մասին, որոնք այժմ կորառւած են: Եւ այս ամէնը այնքան բարեխղճօրէն եւ գիտականօրէն, որ մինչօրս էլ բաւարարում է գիտութեան պահանջներին եւ ուսումնասիրողներին:

ՔՆԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Summary**CODICOLOGIST FATHERS OF S. LAZAR
AND THEIR CATALOGUES OF MANUSCRIPTS****KNAR HARUTYUNYAN**

Our report presents the enormous work of codicologist fathers B. Saragisyan, G. Sarkisian, S. Chemchemyan and their assistants at St. Lazarus: that huge work is the scientific description of manuscripts in the depository of the Venice Mechitarists and the compiling of manuscripts' catalogues. The catalogue consists of 8 volumes. We also describe the catalogue of Constantinople's Lusavorich Church manuscripts, compiled by Arsen Ghazikyan. The catalogue is the only evidence of these lost manuscripts today. We examine the principles of the catalogues' structure and their features, comparing them with the accepted orders and today's principles.